ՄՄԿ Մեկնաբանություն 7

Անցումը եվրոյի

Հղումներ

- «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*» ՀՀՄՍ 1 (2007 թվականի վերանայված տարբերակը)
- «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*» ՀՀՄՍ 8
- «*Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր*» ՀՀՄՍ 10
- «*Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները*» ՀՀՄՍ 21 (2003 թվականի վերանայված տարբերակը)
- «*Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ*» ՀՀՄՍ 27 (2008 թվականի փոփոխված տարբերակը)

Խնդիրներ

1. 1999 թվականի հունվարի 1-ից՝ Տնտեսական և արժութային միության (ՏԱՄ) գործունեության փաստացի սկզբից, եվրոն կդառնա լիիրավ արժույթ, իսկ եվրոյի ու մասնակից երկրների ազգային արժույթների փոխանակման փոխարժեքը անհետադարձ կֆիքսվի, այսինքն՝ այս արժույթների հետ կապված հետագա փոխարժեքային տարբերությունների ռիսկը կվերանա այս ամսաթվից ի վեր:
2. Խնդիրը ՀՀՄՍ 21-ի կիրառումն է Եվրամիության անդամ-պետությունների ազգային արժույթներից եվրոյի անցման («անցում») նկատմամբ:

Փոխհամաձայնություն

3. Արտարժույթով իրականացվող գործարքների և արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկմանը վերաբերող ՀՀՄՍ 21-ի պահանջները պետք է խստորեն կիրառվեն անցման ժամանակ: Նույն տրամաբանությունը կիրառվում է նաև փոխանակման փոխարժեքների ֆիքսման նկատմամբ, երբ երկրները ՏԱՄ-ին միանում են ավելի ուշ փուլերում:
4. Սա, մասնավորապես, նշանակում է, որ՝
   ա) գործարքների արդյունքում առաջացած արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները շարունակում են վերահաշվարկվել ֆունկցիոնալ արժույթով՝ կիրառելով փակման փոխարժեքը: Արդյունքում առաջացած ցանկացած փոխարժեքային տարբերություն պետք է անմիջապես ճանաչվի որպես եկամուտ կամ ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ կազմակերպությունը պետք է շարունակի կիրառել գործող

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոխարժեքային տարբերություններից առաջացած այն օգուտների և վնասների գծով, որոնք վերաբերում են կանխատեսված գործարքի արտարժութային ռիսկի հեջերին.

բ) արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման հետ կապված կուտակային փոխարժեքային տարբերությունները, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, պետք է կուտակվեն սեփական կապիտալում և վերադասակարգվեն՝ հանվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում, միայն արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրման օտարման կամ մասնակի օտարման դեպքում.

գ) մասնակից երկրների արժույթներով արտահայտված պարտավորությունների վերահաշվարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները չպետք է ներառվեն համապատասխան ակտիվների հաշվեկշռային արժեքներում:

Փոխհամաձայնության ամսաթիվը

1997 թվականի հոկտեմբեր

Ուժի մեջ մտնելը

Սույն Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 1998 թվականի հունիսի 1-ից: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ի պահանջների համաձայն:

ՀՀՄՍ 1-ում (2007 թվականի վերանայված տարբերակ) կատարվել են ՖՀՄՍ-ներում կիրառվող տերմինների փոփոխություններ: Ի լրումն՝ այն փոփոխել է 4-րդ պարագրաֆը: Կազմակերպությունը պետք է այդ փոփոխությունները կիրառի 2009 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը ՀՀՄՍ 1-ը (2007 թվականի վերանայված տարբերակը) կիրառում է ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա փոփոխությունները պետք է կիրառվեն այդ այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար:

ՀՀՄՍ 27-ը (2008 թվականի փոփոխված տարբերակը) փոփոխեց 4(բ) պարագրաֆը: Կազմակերպությունը պետք է այդ փոփոխությունը կիրառի 2009 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը ՀՀՄՍ 27-ը (2008 թվականի փոփոխված տարբերակը) կիրառում է ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա փոփոխությունը պետք է կիրառվի այդ այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ